12892

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«22» 09 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0134-22

Ձեռնարկողը՝ ***«ՄՈԴԵՐՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Մամիկոնյանց փողոց 42-44

Գործունեությունը՝ ***Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի փողոց 1-ին փակուղի թիվ 5 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0134-22

<22> 09 2022թ.

«ՄՈԴԵՐՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի փողոց 1-ին փակուղի թիվ 5 հողամաս հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՄՈԴԵՐՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր

«ՄՈԴԵՐՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի փողոց 1-ին փակուղի թիվ 5 հողամաս հասցեում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք:

Գործունեությունն իրականացվելու է Ծաղկաձոր համայնքապետարանի կողմից տրամադրված 2022թ. մարտի 9-ի N06 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա (նախագծման թույլտվության ժամկետը սահմանված է երկու տարի), անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.43հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի փողոց 1-ին փակուղի թիվ 5 հողամաս հասցեում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան եզրամասում, որն արևելյան մասից սահմանափակված է Գեղամա լեռների հյուսիս-արևմտյան եզրամասով, որոնք բարդացած են ցածր և ոչ խորը գոգավորություններով: Տվյալ տեղամասում մինչև 24 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և, ըստ արխիվային նյութերի, դրանք գտնվում են շատ ավելի ցածր խորության հորիզոններում: Տարածքի հիդրոերկրաբանական

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

պայմանները հիմնականում բարենպաստ են: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ուսումնասիրվող տարածքում բացակայում են: Ըստ սեյսմիկ հատկության ՀՀՇՆ 20.04.2020թ.՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 8-9 բալ սեյսմակայունությամբ:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ 3 գրունտների շերտերը՝ լիցքեր, խճաքարա-խճավազային նստվածքներ, ավազա-կավավազային նստվածքներ:

Կառուցապատման ենթակա տարածքում առկա չեն «ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24-ի ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N1793-Ն որոշմամբ սահմանված պատմության և մշակույթի հուշարձաններ: Նախատեսվող գործունեության տարածքում չկան բնության հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ, ծառաթփային բուսականությունը բացակայում է, ծառահատումներ կամ ծառերի տեղափոխություններ չի նախատեսվում: «Արզական-Մեղրաձորի» և «Բանքսի սոճու» պետական արգելավայրերը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում են մոտ 2000-32000մ հեռավորության վրա, «Կեչառիս» վանական համալիրը գտնվում է մոտ 826.5 մետր հեռավորության վրա:

Կառուցապատման ենթակա տարածքը ազատ է կառուցապատումից, առկա է մեկ կողմից հարևան հողատարածքներ, հողամասը հյուսիսից հարում է Սարալանջ փողոցին:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողատարածքի ընդհանուր մակերես – 0.43 հա,
  (ներառյալ անջրանցիկ մակերեսները)
- Կառուցապատման մակերես – 2547.7 մ² / 59,25%,
- Կանաչապատման մակերես - 1752.3 մ² / 40,75 % ,
- Բնակարանների քանակ՝ 159 բնակարան,
- Ավտոկայանատեղի – 83 / կազմում է բնակարանների քանակի 52 %:

Բնակելի շենքն ունի 3 ստորգետնյա և 8 վերգետնյա հարկեր (ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 20941.31մ²): Ստորգետնյա 2 հարկերում (նիշ -10,20 (1753.54մ²) և -6,90 (1755.91մ²)) տեղակայված են ավտոկայանատեղերը՝ որոնց մուտքերը կազմակերպված են հարավային ճակատից: Ստորգետնյա ավտոկայանատեղին ընդհանուր թվով 73 մեքենաների կայանման համար է: Եվս 10 ավտոկայանատեղի նախատեսված է վերգետնյա՝ ապահովելով գումարային 83 ավտոկայանատեղի՝ բնակարանների ընդհանուր թվաքանակի 52%-ը: Ստորին -1 հարկը -3,60 նիշով (1626.44մ²) հասարակական նշանակության է: Առաջին վերգետնյա հարկը՝ ±0,00 նիշով (1707.98մ²) տարանջատված է հասարակական և բնակելի նշանակության (թվով 10 բնակարան), ±0,00 նիշով են նախատեսված նաև մուտքերը դեպի շենքի 2 աստիճանավանդակներ՝ հյուսիսային ճակատից: Սկսած +3,90 նիշից տեղակայված են թվով 7 բնակելի հարկերը (յուրաքանչյուր հարկի բարձրությունը՝ 3,30մ):

Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են: Կառույցի տանիքը նախատեսված է հարթ՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ, կոնստրուկցիաները՝ ե\բ-ից: Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե, տուֆե և տրավերտինե սալերով:

Որպես ջերմության աղբյուր բազմաբնակարն շենքի տանիքում նախատեսվում է կառուցել կաթսայատուն՝ համալրված ջրատաքացուցիչ կաթսաներով՝ 2-ը ջեռուցման և օդափոխության համար (Q=500կՎտ հզորությամբ), իսկ 1-ը՝ տաք ջրամատակարարման

(421 կՎտ): Օդահեռացումը համակարգից իրականացվում է մարտկոցների, տեղադրված օդահան ծորակների միջոցով:

Բազմաբնակարան շենքի բնակելի մասի խոհանոցներից, ս/հանգույցներից և լոգարաններից օդափոխությունը նախատեսված է բնական հորանների միջով Ø160մմ, Ø125մմ և Ø100մմ օդատարերով: Հասարակական հարկերում և ավտոկայանա-տեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր:

Էներգաարդյունավետությունը նախատեսվում է կատարել համաձայն գործող նորմերի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվող բարձր արդյունավետության ջերմամեկուսիչները, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացումը, օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով, ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր, արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/, օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԵՑ» ՓԲ ընկերության տեխնիկական պայմանի: Հոսանքի սնուցումն իրականացվելու է Ծաղկաձոր քաղաքի նոր կառուցվող 35/10կՎ ենթակայանի երկու տարբեր բջիջներից՝ կառուցելով երկու 10կՎ ՕՄԳ:

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության տեխնիկական պայմանի՝ բազմաբնակարան բնակելի շենքի գազամատակարարումը կիիրականացվի 141մ^3 ժամային ծախսով D=219մմ միջին ճնշման ստորգետնյա գործող գազատարից, որի հեռավորությունը հողամասից 1000 գծամետր է:

Ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը կիրականացվի տարածքից մոտ 700մ հեռավորության վրա անցնող d=150մմ ջրագծից, կոյուղաջրերի հեռացումը կիրականացվի միանալով տարածքի դիմացով անցնող d=400մմ կոյուղագծին:

Ջրամատակարարումը և կոյուղին նախագծելիս՝ նախատեսվում են արտաքին հետևյալ համակարգերը՝ խմելու-տնտեսական, տնտ. կենցաղային կոյուղի, հեղեղատար կոյուղի, ոռոգման համակարգ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Բետոնախառնուրդի առաքումը կիրականացվի СБ-69Б ավտոբետոնախառնիչով՝ վերամբարձի, ավտոբետոնապոմպի կամ ստացիոնար բետոնապոմպի միջոցով: Բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է 30 ամիս, 2,5 օրացուցային տարի, որից 1 ամիսը նախատեսված է նախապատրաստական աշխատանքների համար: Բանվորների առավելագույն քանակը 62 մարդ, միջինը՝ 36 մարդ: Շինարարության ընթացքում օգտագործվելու են աշտարակային ռելսային կռունկ, ավտոմոբիլային կռունկ, էքսկավատոր, գլդոն, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, ավտոբետոնախառնիչ և այլն: Համաձայն բազմաբնակարան բնակելի շենքի նախագծի՝ հողային աշխատանքները կիրականացվեն AT 325DL(01), Volvo EC460 BLC(01) Hyundai ROBEX 300 կամ համանատիպ մեքենաների կիրառմամբ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Հողային աշխատանքների ընթացքում հանույթը կազմում է՝ 21700մ³, հետլիցքը՝ 7900մ³: Ավելացած հողային զանգվածը և բուսահողը պահվելու է առանձին՝ հողաթմբերով: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 180մ³ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով հողաթմբերը ծածկվելու են անջրաթափանց բրեզենտե ծածկույթով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո բուսահողը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար, իսկ ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի ՏԻՄ կողմից նախանշված տարածք:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Հիմնական թափոնատեսակները, որոնք կառաջանան շին. աշխատանքների իրականացման ընթացքում շինարարական աղբն է 180 մ³ և տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) 1.2տ: Շինարարական աղբը բարձվելու է ինքնաթափերի վրա և ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախանշված վայր: Հանգստի տնակների շահագործման ընթացքում առաջացող կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան աղբահավաք ընկերության կողմից:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Համաձայն նախնական գնահատման հայտի ջրի օգտագործման ընդհանուր ծախսը կազմում է 6"5մ³/օր: Շինարարության փուլում խմելու ջուրը կմատակարարվի տարաներով, տեխնիկական ջուրը կբերվի ավտոցիստեռներով պայմանագրային հիմունքներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ:

Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25մ³ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500մ² մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման էսքիզային դենդրոնախագիծ՝ ըստ որի կանաչապատման մակերեսը 40% և ավելի է: Էլեմենտների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները և բուսականությունը: Տարածքում նախատեսվում է տնկել մասնավորապես՝ թխկի կարմիր (28 հատ), կատալպա (20 հատ), ձիակասկ (6 հատ), գնդաձեվ ակացիա (40 հատ), հուդայածառ (9 հատ), բարբարիս (13 հատ), գնդաձեվ իլենի (45 հատ), սյունաձեվ թույա (30 հատ), սիզամարգ (1700մ²), գնդաձեվ սամշիտ (13հատ), փռվող գիհի (15 հատ), սամշիտ (440մ):

Կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսվում է կաթիլային ոռոգման ցանցով: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ոռոգիչներ

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

խողովակներ ոռոգումը կազմակերպելու համար: Համակարգը նախատեսված է իրականացնել պոլիէթիլենե Մ110x4,2մմ և պողպատե էլեկտրաեռակցվող Մ108x4,0մմ տրամաչափի խողովակներից: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով մասնագիտացված ընկերության կողմից, նաև տարածքում կնախատեսվի ջրի պահեստային ռեզերվուարներ:

Տարածքում առկա հողի բերրի շերտը՝ մոտ 180մ³ կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքերի ընթացքում:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվող բնապահպանական միջոցառումներն են՝

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1.050 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն նախնական հայտի՝ բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատումից ազատ տարածքի վրա, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, անտառ կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Ապահովել հայտում նախատեսված գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:
- Մինչև գործունեության իրականացումը՝ կանաչապատման նախագիծը ներկայացնել Ծաղկաձորի համայնքապետարանի հաստատմանը՝ պահպանելով հայտում ամրագրված 40.75% կանաչապատման մակերեսը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ծաղկաձորի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի էներգախնայողության և էներգաանվտանգության հետ կապված միջոցառումներն իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
- Անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93–Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 և բնակելի շենքեր Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր»՝ ՀՀՇՆ 31-01-2014 նորմերի պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄՈԴԵՐՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի փողոց 1-ին փակուղի թիվ 5 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան